

## ՊՈԼԻԿԻԱ ԿՏԱՐԱԾ Է ՎԵՆԵՉՈՒԵԼԱՅԻ ԴԵՏՊԱՆԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԱՍՐԵՐԸ

Վենեզուելայի նախագահ Նիկոլաս Մատուրո յայտարարեց, որ Պոլիվիոյ մէջ Վենեզուելայի պաշտօնատարները հեռացած են երկրէն: «Դեսպանատան պաշտօնատարները անձնակազմի սպանալիքներ ստացան, ինչպէս նաեւ դեսպանատան շէնքը գրաւելու կամ հրկիզելու սպանալիքներ», ըսաւ ան: Պոլիվիոյ փոխանցման կառավարութեան մէջ արտաքին գործոց նախարար Քարեն Լոնկա-րիք յայտարարեց, որ վենեզուելացի դիւանագետները անբաղձալի անձեր են: «Քամալի» օրաթերթը հաղորդեց, որ Լոնկարիք յայտնած է. «Մեր երկրին ներքին հարցերուն միջամտութեան պատճառով՝ անոնց երկրէն հեռանալու պայմանաժամ ճշդեցինք»:

### ԱԿՏՈՐ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԻՐԱՆԵԱՆ 3ԵՆԱԿԷՏԵՐՈՒ ԴԷՄ

Միացեալ Նահանգներու դեսպան Էն Թրէյսին ուղեւորելու յայտարարութիւն կատարած է Իրան-Յայաստան յարաբերութիւններու ուղղութեամբ ամերիկեան ընկալումներուն մասին: Յայտնելով, որ Ուաշինկթըն կ'ըմբռնէ Իրանի նշանակութիւնը Հայաստանի համար, ան յստակացուցած է, որ անկախ ինչո՞ր չի տեսնէր Իրանի հետ Հայաստանի եւ Հայաստանեան ամերիկեան շրջանակներու միջեւ օրինակաւ համագործակցութեան առումով: Դեսպան Թրէյսին պարզաբանած է, որ Միացեալ Նահանգներու մտահոգութիւնները կապուած են ոչ թէ Իրանի հետ օրինակաւ ամերիկեան, այլ այն հարցերուն, որոնք կը վերաբերին Իրանի կողմէ սահմանափակ միաւորումներուն պետական մակարդակով աջակցութիւն ցուցաբերելուն:

Առաջին հայեացքով այն համոզումը կը գոյանայ, որ Հայաստանեան իրադրական վիճակին ըմբռնումով կը մտնեն այն ամերիկեան դիւանագիտութիւնը: Ինչո՞րը սակայն նաեւ կը վերաբերի տնտեսական առումով Իրանի ապաշրջափակման: Որքան ընկալուի Հայաստանեան իրադրական կարգավիճակը այնքան նաեւ կը վերաբերի Իրանին, այս պարագային արտահանում թոյլատրելու առումով: Իրանի բացարձակ մեկուսացումը կամ ամբողջական շրջափակման ամերիկեան միտումները նման բացառութիւն չէին հանդուրժեր: Զաղաքական առումով ուրեմն երկկողմանիօրէն հասկացողութիւն ցուցաբերելու դրսեւորման կը վերաբերի Միացեալ Նահանգներու պաշտօնական դիրքորոշումը:

Ընթացող խաղի կանոնները օրինակաւ են. մէկ կողմէ պատժամիջոցներ, միաժամանակ հանդիպման հրավեր պաշտօնական թեղիքներ Միացեալ Նահանգներէն, գուցա հետ պայմաններ՝ հիւլեական ծրագիրէն հրաժարելու, եւ ապաշրջափակման փոքր ելքերու հնարաւորութիւն տալու:

Ճնշամիջոցներ՝ ամերիկեան պայմաններով հանդիպումը կայացնելու թաղանթաւորութեան հասկնալի ուղեւորներ կը ինչն այս ձեռով: Յայտարարութեան երկրորդ մասի ուղերձը այլ ուղղութեամբ կ'ընթանայ: Միացեալ Նահանգներու մտահոգութիւնները կապուած են Իրանի կողմէ սահմանափակ միաւորումներուն պետական մակարդակով աջակցելուն: Խօսքը շեշտակի տարածաշրջանին մէջ Իրանեան ազդեցութեան գոտիներու պահպանման համար ընթացող ռազմաքաղաքական իրադրութիւններուն կը վերաբերի:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարը պէրոլեան այցելութեան ընթացքին չէր վարանած սահմանափակ օրակներ իրանաւէտ Յիւզպայլա կուսակցութիւնը: Աւելի ուշ ան յորդորած էր տարբեր պետութիւններուն աջակցիլ Իրանի եւ Լիբանանի ժողովուրդներուն՝ ձերբազատելու համար իրանեան ազդեցութիւնէն: Բնութագրելով իրանեան վերջին ցոյցերը՝ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերը յայտնած է, որ Լիբանանի, Իրանի եւ Իրանի ժողովուրդները փտածութեան դէմ կը պայքարին եւ թափանցիկութիւն կը պահանջեն:

Իրան յայտարարած էր, որ միլիառաւոր տակաւներու քանակով նաւթի սոր հանք յայտնաբերած է: Անոր գուցա հետ սակայն վառելիքի գիներու բարձրացումն ու սահմանափակ տրամադրումը բողոքի դրսեւորումներու առիթ տուած է երկրին մէջ:

Այս բոլորը կարելի է մեկնաբանել ճնշամիջոցներու սատակացումով նախապատրաստելու թեղիքներ - Ուաշինկթըն հանդիպումը: Ան այս պահը թեղիքներ մերժած է ամերիկեան պայմաններով հանդիպիլը:

Տարածաշրջանին մէջ կ'որոնագծուի սոր խորպատկեր: Տարբեր երկիրներու մէջ ընթացող ընկերային եւ քաղաքացիական պահանջներով հանդէս եկած ցոյցերուն կը տրուի հակաիրանեան դիմագիծ: Թե՛ւ, Իրանի ցոյցերը պաշտօնապէս այդ գունաւորումը ստացած էին արդէն: Սկսած են երեւի շիի գանգուածներու մօտ հակաիրանեան դրսեւորումներ:

Շիի քաղաքական բեւեռի չեզոքացումը անպայման չ'ենթադրէր սիննի քաղաքական բեւեռի հզորացումը. տարածաշրջանային մակարդակով տնտեսաքաղաքական իրադրութիւններուն հետեւողը կը նկատէ Մեուտական Արաբիոյ ազդեցութեան թուլացման միտումները:

Միւսինչի կամ ներշիխական բախումային իրավիճակներէն գլխաւոր օգտուողը տնտեսականօրէն եւ գործնապէս Իրանն է, որուն անհրաժեշտ է անվերջ տեղափոխման միջոցները: Ընթացքն ու դեպքերուն ապահոված արդիւնքը այդ մասին կը վկայեն:

Իսկ Իրան-Յայաստան ամերիկեան շրջանակներու մէջ օրինակաւ ամերիկացի հանգիստ ընկալելու ամերիկեան ուղերձը ունի լուր եւնթա-առաջարկ: Իրանեան տնտեսութիւնը կրնայ զարգանալ կամ թեղիքի դէմ յայտարարուած տնտեսական պատերազմը կրնայ աւարտիլ՝ տարածաշրջանին մէջ ռազմաքաղաքական յենակետերու չեզոքացման պարագային:

«Ա.»

## ՄԻՆՉ ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՇԱՐՔՈՒՄԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՓԱԿԵԼ ՃԱՄԲԱՆԵՐԸ, ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ԱՅՍՕՐ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՎԵՆԵՉՈՒԵԼԱՅԻ ԴԵՏՊԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԿԸ ԲԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԳՈՒՆԵՐԸ

Ժողովրդային շարժումը բաղկացնող գանազան խմբաւորումներ երկ կէսօրին կոչ ուղղեցին, որ շարժումին մասնակիցները այսօր առաւօտեան ժամը 7:00-էն սկսեալ փակեն խորհրդարան տանող բոլոր ճամբաները՝ նպատակ ունենալով արգելափակել խորհրդարանի գոյգ նիստերը:

Նիստերէն առաջինը պիտի գումարուի կէսօրէ առաջ ժամը 11:00-ին՝ ընտրելու համար խորհրդարանի երկու ընդհանուր քարտուղարները, ինչպէս նաեւ խորհրդարանական յանձնախումբերու անդամները: Իսկ երկրորդը՝ օրէնսդրական նիստը, պիտի գումարուի կէսօրէ ետք ժամը 1:00-ին, վաւերացնելու եւ օրէնքի վերածելու համար խորհրդարանի հասած շաք մը օրինագիծներ:

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժնմայել յայտնեց, որ իրենք իմացած են, որ Նիստը գաղտնի պիտի ըլլայ՝ աւելցնելով, որ Նիստին օրակարգը լիբանանացիներուն ներկայացուցած պահանջներէն ոչ մէկը կը ներառէ:

«Կիսիքն» Նիստին ընթացքին Նախկին երեսփոխաններուն աշխատավարձերը չէղէպ նկատելու, ելեկտրոնային քուէարկութեան եւ բարեկարգումի ոչ մէկ օրինագիծ պիտի քննարկուի: Այսօր առաջնահերթութիւնը վարչապետի նշանակումն է՝ պարտադիր խորհրդակցութիւններու ճամբով, հետուաբար պատասխանատուութիւնը կ'իյնայ հանրապետութեան նախագահին վրայ», ըսաւ ան:

Իր կարգին, Նազարական շարժումի ընդհանուր քարտուղար, երեսփոխան Ռուսամ Սատա հաստատեց, որ ինք խորհրդարանի այսօրուան նիստին իր մասնակցութիւնը պայքարի պիտի ենթարկէ, որովհետեւ քննարկուելիք օրակարգը ժողովուրդին առաջնահերթութիւնները չի պարունակէր:

Հօր հանրապետութիւն համախմբումի նիստէն ետք, Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր ժահժահ յայտ-

նեց, որ համախմբումի երեսփոխանները պիտի չհասնան խորհրդարանի այսօրուան նիստին:

Ժողովրդավարական հանդիպումը երկ գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ երեսփոխան Թայմուր ժումպլաթի:

Նիստին ետք պլոքի անդամ Հատի Ապու Հասան յայտարարեց, որ ժողովրդավարական հանդիպում պլոքը խորհրդարանի այսօրուան նիստին պիտի չմասնակցի:

Ազգային երկխօսութիւն կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ֆուատ Մախաբուի շեշտեց, որ յարգելով անկի քան ամիս մը ի վեր բողոքի ցոյցեր կատարող քաղաքացիներուն կամքը, ինք այսօրուան օրէնսդրական նիստին պիտի չմասնակցի:

Ան նշեց, որ խորհրդարանը լքօրէն չի վերաբերի ժողովրդային շարժումի պահանջներուն հետ, յատկապէս փտածութեան դէմ պայքարելու, փտածները հաշուառութեան կանչելու եւ իրաքուստ գումարները վերադարձնելու առումով:

Ժողովրդային շարժումի անդամ իրաւաբաններ եւ գործիչներ հաստատեցին, որ այսօր առաւօտեան պիտի սկսին անկի աշխուժ ցոյցեր կազմակերպել՝ մերժելու համար իրենց պահանջներուն նկատմամբ խորհրդարանին ցուցաբերած մօտեցումը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մորկըն Օրթակուն հաստատեց, որ Միացեալ Նահանգներ հպարտօրէն կը զօրակցին լիբանանացիներուն, մինչդէռ Ռուսիա կակաւածի տակ կ'առնէ ժողովուրդին պահանջները՝ զանուց որակելով ամերիկեան դաւադրութիւն:

Շար.՝ էջ 2

## ԹԵՐԱՆ ՈՒՇԻՆԿԹԵՆ Կ'ԱՍՐԱՍՏԱՆԵ ԻՐԱՆԻ ՄԵՋ ԱՆԿԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԸԱՅՔԱՅԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիժանի յայտնեց, որ Միացեալ Նահանգներու նպատակը Իրանի մէջ անվտանգութեան քայքայումն է՝ նշելով, որ խորհրդարանը իր ժողովին ճամբով առիթ պիտի չընծայէ երկրին մէջ անվտանգութիւններու, մասնաւոր իր գերագոյն հոգեւոր պետ յայտնելու Ալի Կամենէին յստակացուց վերջին իրադրութիւններուն մէջ քաղաքացիներուն ու պաշտօնատարներուն շարժելու յարմար ընթացքը:

Իրանի կառավարութեան բանբեր Ալի Ռապիի յայտնեց. «Դեհազիհի գիւղը բարձրացնելու նպատակը ժողովուրդի ցած



եկամուտի տէր եղող հատուածին աշակցիլն է, ստիկա դժուար որոշում է, սակայն անոր դրական արդիւնքները երեսն պիտի գան անկի ուշ»:

Շար.՝ էջ 3

## ԵՄԵՆԵԱՆ ԾՈՎՈՒԹԸ ԳՐԱԿԵՑ ԵՐԱՐՈՒ ՆԱԿԵՐ

Եմենեան զինուորական աղբիւր մը յայտարարեց, որ ծովումը Կարմիր ծովուն մէջ կատարած է գործողութիւն մը, որուն մասնաւորութիւնները հետագային պիտի հրապարակուին:

Սեուտական ղեկավարութեամբ Արաբական դաշինքի բանբեր Թուրքի Մալքի յայտնեց, որ Սանաայի զինեալ ուժերը գրաւած են 500 հազար տակաւ քարիւղ փոխադրող սեուտական քարիւղատար նաւ մը, ինչպէս նաեւ անձնակազմի 28 անդամներ ունեցող ջորէական քարիւղատար նաւ մը, որ կը փոխադրէ հորաւման գործիքներ:

Նաւերը գրաւուած են Զամրան կղզիին



մօտ, որ կը գտնուի Եմենեան Հոնդոյա քաղաքին արեւմուտքը:

Եմենի մէջ քաղաքական բարձրագոյն խորհուրդի անդամ Սոհաբեա Ալի Հուսի

Շար.՝ էջ 10

## ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՆ ՄԵՋ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՔԱՐԱՐԻ ՄԻՋԵՒ



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան Առաջին տիկին Լուսինե Սարգսեանի հետ պաշտօնական այցելութեամբ Քաթար կը գտնուի:

Այցելութեան առաջին օրը Արմէն Սարգսեան այցելեց Քաթարի հիմնադրամ, ուր անոր ներկայացուցեան հիմնադրամի գործունէութեան հիմնական ուղղութիւններն ու կառուցուածքը, իրականացուող ծրագիրները: Տեղեակ պահուցեալ, որ հիմնադրամը նպատակ ունի աշակցիլ երկրին՝ «Մարդկային ներուժը բացայայտելու միջոցով վերածնելու գիտահետ տնտեսութեան»:

Շար.՝ էջ 10

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՆ ԳՄԱԿԱՑՈՂՈՒԹԵԱՄ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ ԻՐԱՆ - ԳՄԱԿԱՑՈՂՈՒԹԵԱՄ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ ԻՐԱՆ - ԳՄԱԿԱՑՈՂՈՒԹԵԱՄ



Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Էն Թրէյսի ղիտել տուած է, որ Ուաշինկթըն լաւապէս կը հասկնայ Իրանի եւ Հայաստանի ունեցած յարաբերութիւնները, ուստի հասկացողութեամբ կը մօտենայ Իրանի հետ Հայաստանի եւ Հայաստանեան գործարար շրջանակներու օրինակաւ համագործակցութեան հարցին:

«Մենք շատ լաւ կը հասկնանք Իրանի նշանակութիւնը Հայաստանի համար: Իրանը Հայաստանի երկու բաց սահմաններէն մէկն է: Մենք նաեւ ըմբռնումով կը մօտենանք Հայաստան-Իրան կազմակերպութեան դիմաց փոխանակումներու ծրագիրին», ըսած է դեսպանը եւ պարզաբանած, թէ Իրանի առնչուած ինչ հարցեր կը յանաջացնեն Միացեալ Նահանգներու մտահոգութիւնը:

Շար.՝ էջ 3

## ՄՈՎՍԵՍ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ԵՐԱՐՈՒ ՏԵՂԱԿԱՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒԹԵԱՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումով Մովսէս Յակոբեան ազատ կացուցուցաւ գլխաւոր ռազմական տեսուչի պաշտօնէն:

Կրկին վարչապետ Փաշինեանի որոշումով՝ աշխատանքէ ազատ կացուցուցան նաեւ գլխաւոր ռազմական տեսուչի տեղակալներ Կամօ Զոյնուց եւ Վաչագան Ներսիսեան:



Շար.՝ էջ 10

## ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԳՂԱԿԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ԳՄԱԿԱՑՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՄՍԱՌՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Դասախօսներն ու մտաւորականները հանդիպում ունեցան Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութեանեանի հետ: Անոնք դժգոհ էին նախարարութեան կողմէ մշակուած «Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան մասին» նոր նախագիծէն, որուն համաձայն, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ «Հայոց լեզու եւ հայ գրականութիւն» եւ «Հայոց պատմութիւն» նիւթերու դասաւանդութիւնը պարտադիր պիտի չըլլայ:

Շար.՝ էջ 3

**ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱԿՆԵՑ ԽԻՍՒՄԵՆ ԲՈՒՆԱԳՐԱՌՈՒՄԸ ՊԵՂԱՍԻՆՈՒՆՈՒՄԸ ԲԱՎԱՔԱՅԻ ՄԸ**



Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը երէկ ՖԻՆՏԻՆ-ի միջազգային խաղաղապահ ուժերու հրամանատարութենէն ստանձնեց լիբանանցի քաղաքացի ժառանգար Մուհամետ Մուսթաֆան, որ 16 նոյեմբեր 2019-ին Խիսամի հովիտէն ուղղուած էր բռնազրարուած Պաղեստին:

Մուսթաֆա այդ քայլին դիմած էր քանի մը հոգիի միջեւ բախումէ ետք արձանագրուած կրակոցներուն պատճառով:

Բանակի հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ բանակը համապատասխան դատական ատենակի վերահսկողութեամբ հետաքննութիւն բացած է այս թղթածրարին վերաբերեալ:

Նշեց, որ իսրայէլեան ուժերը յայտարարած էին, որ գինուորական դիտակները նշմարած էին, թէ Լիբանանէն անհատ մը մուտք կը գործէ իրենց տարածքը, եւ զայն ձերբակալելէ ետք հետաքննութիւն բացած էին:

**ԱՄԵՐ ՖԱԽՈՒՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉՆԵՐԿԱՅԱՑԱՒ**



Լապաթիեի Արդարութեան պալատին դիմաց երէկ մեծ թիւով քաղաքացիներ, որոնց մաս կազմեցին նաեւ Խիսամի բանակի նախկին արգելափակուածներ, նստացոյց մը կատարեցին՝ պահանջելով Ամեր Ֆախուրիի դէմ մահապատիժի վճիռ արձակել:

Երկար սպասումէ ետք, դատարանը տեղեկ պահուեցաւ, որ Ներքին ապահովութեան ուժերը Ֆախուրիին չեն կրցած փոխադրել՝ անհանգստութեան պատճառով:

Յետեւաբար Ֆախուրիի դատավարութեան շնորհակալացաւ:

Նշեց, որ Ամեր Ֆախուրիին, Միացեալ Նահանգներէն Լիբանան եկած էր եւ Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէնութեան կողմէ ձերբակալուած՝ Իսրայէլի հաշուոյն գործակալութեան յանցանքով:

**«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՒՆԿԻՆ**

- Լիբանանի ներկայ պայմաններուն մէջ քաջալերելով «Ազգակ»-ի աշխատանքները - ՏԵՐ ԵՎ ԵՎԻՈՒՆ ԶԱԿՈՐ ԵՎ ՏԻՐՈՒՄ ԳՐԱՆԻՍՆԱԿԻ (Զանաւոր) 150\$

**Լիբանանի Տղայնակներու Զայրեակցական Միութիւն ԱՆԿԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

Տղայնակներու հայրենակցական միութեան անդամական Ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ չորեքշաբթի, 20 նոյեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Պուրճ Շամուտի Զայրակցութեան Մեթոդական Բարձրագոյն վարժարանի «Ֆարաճեան» սրահին մէջ:

- Օրակարգ.- Ընթացաւոր վարչութեան նիւթաբարոյական եռամսյա գործունէութեան քննարկում: - Նոր վարչութեան ընտրութիւն - Զիրաբարութիւն

ԾԱՆՕԹ.- Ներկայներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի երեկոյեան ժամը 6:30-ին:

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

**ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՆԱԳՐՈՒԹԵԱՆ**

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեւերով օգնել ընդունելութիւններու համար «Ազգակ»-ի «Փինիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթիէն ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

**ՄԻՆՉ ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ...**

Շարունակուած Ա. Էջէն

ժողովրդային շարժումի ներկայացուցիչներ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին յանձնեցին ելեմտական ոճիրներու յատուկ դատական ատենակի ստեղծելու օրինագիծին վերաբերեալ որոշ բարեփոխումներ:

Պըրրիի խոստացաւ այդ առաջարկները ամենէն արագ միջոցին սերտել եւ զանոնք նկատի ունենալ:

Միւս կողմէ, Պըրրիի յայտնեց, որ ինք տակաւին գրաւը կը դնէ հրաժարեալ վարչապետ Սաատ Յարիրիի վերադարձին եւ նոր կառավարութեան կազմութեան վրայ: Ան նշեց, որ նոր նախարարաց խորհուրդը կազմելու իմաստով ստաճած է ամէն ինչ, սակայն որեւէ ատեն կրնան տրուութիւններ արձանագրուիլ:

Պըրրիի ներկայ կացութիւնը որակեց շատ վտանգաւոր՝ նկատել տալով, որ Լիբանան կը նմանի Նաուո մը, որ աստիճանաբար կ'ընկղմի: Ան ատելցուց, որ եթէ կարելի չըլլայ անմիջական քայլեր որդեգրել, ապա այդ նաեւ ամբողջութեամբ պիտի ընկղմի:

Անկի ուշ Պըրրիի կոչ ուղղեց կազմելու 20 նախարարներ բաղկացած կառավարութիւն մը, որուն 6 նախարարները կը ներկայացնեն քաղաքական ուժերը, իսկ 14-ը կը ներկայացնեն մասնագէտները:

Յրաժարեալ վարչապետ Սաատ Յարիրի երէկ յետմիջօրէին Կերդուրական Պէյրութի իր բնակարանին մէջ նախագահեց Մուսթաֆայի հոսանքի քաղաքական գրասենեակի ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան



Լիբանանի մէջ տեղի ունեցող քաղաքական իրադարձութիւնները, յատկապէս կառավարութեան կազմութեան վերաբերող մանրամասնութիւնները:

Յարիրի հաստատեց մասնագէտներու կառավարութիւն մը կազմելու տեսակետին իր կառչածութիւնը, ինչպէս նաեւ ընդգծեց վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւնները կատարելու անհրաժեշտութիւնը:

Յարիրի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Մըլիմէ Խալաֆի հետ եւ շնորհակարտեց զինք՝ Պէյրութի Իրաւաբաններու սենտիքայի նախագահ ընտրուելուն առիթով:



Իր կարգին, խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի երէկ կէսօրէ առաջ խորհրդարանին մէջ հրաւիրեց մամուլը ասուլիսի մը, որուն ընթացքին յայտնեց, թէ հանրային կարծիքը կը խնդրէ օրէնքներ վաւերացնել, ինչպէս նաեւ կ'առաջարկէ օրինագիծեր, որոնք պէտք է ամենէն արագ միջոցին ուսումնասիրուին: «Այս նպատակով մը, որ խորհրդարանը անցեալ երեքշաբթի օր հրաւիրած էր օրէնսդրական կոմիտիի մը, որ յետաձգուեցաւ եւ տեղի պիտի ունենայ վաղը», ըսաւ ան:

Ֆըրզլիի հերքեց այն տեղեկութիւնները, թէ համաներումը կ'ընդգրկէ լիբանանցի բանակայիններու դէմ յարձակում գործած ուժաբարձրներուն ազատ արձակումը:

Ան նշեց, որ պիտի առաջարկուի նաեւ ընտրական նոր օրէնք մը, որուն մէջ նկատի պիտի առնուի լիբանանցիներուն կամքը եւ Լիբանանը քաղաքացիական պետութեան ուղիին վրայ դնելու կարեւորութիւնը:

Հատարմութիւն դիմադրութեան պլոքի երեսփոխան Հասան Ֆատուլլայ յայտնեց, որ իրենք դատական իշխանութիւններուն տրամադրած են շարք մը թղթածրարներ, որոնք կը վերաբերին փտածութեան, սակայն ցարդ ոչ մէկ փտածի բանտարկութիւնը վկայած:

Ան հաստատեց, որ հաշտութեան կանչելու հովովոյքը կարելի է յաջողցնել միայն օրինական գործառնութիւններու ընդմէջէն:

Ֆատուլլա յայտնեց, որ իրենք Ազատագրում եւ բարգաւաճում պլոքին հետ միասնաբար խորհրդարանին ներկայացուցած են օրինագիծ մը, որով 1992-էն սկսեալ Լիբանանի կառավարութիւններուն անտրամակցած բոլոր նախարարներուն անձեռնմխելիութիւնը կը վերացուի:

Ֆատուլլա պահանջեց ներկայ եւ նախկին նախարարները հաշտութեան կանչել եւ այդ պարտականութիւնը դատական իշխանութիւններուն վստահիլ:

Ան ողջունեց լիբանանցի ժողովուրդին արդար պահանջները՝ անէլցնելով սակայն, որ կան արտաքին կողմեր, որոնք կը փորձեն ժողովրդային շարժումը շահագործել եւ քաղաքական ճնշումներ բանեցնել երկրին վրայ՝ ելեմտական կարգ մը գործառնութիւններու միջոցով՝ ամբողջական տղարի բարձրացումին կամ տղածին ընդմէջէն:

Ֆատուլլա հաստատեց, որ նոյնիսկ եթէ կառավարութիւնը հրաժարած է ընթացիկ հարցերու կառավարութեան պարտականութիւններէն եւ սղածին դէմ պայքարել:

**ՆԱԽԱԳԱՅ ԱՌԻՆ ՏԱՎԻՆ ԶԵՃԵՆՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԵԱՆԱԿԱՆ**

**ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԹՈՒԿԱՆԸ**

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երէկ շարունակեց վարչապետի նշանակման իմաստով սկսած իր հանդիպումներն ու հաղորդակցութիւնները, սակայն անոնք տակաւին առիթ չտուին նախագահին՝ խորհրդարանը պարտադիր խորհրդակցութիւններու հրաւիրելու:

Հանրապետութեան նախագահը հաստատեց, որ յաջորդ կառավարութիւնը պէտք է ըլլայ մասնագէտներէ եւ քաղաքական անձնակազմութիւններէ բաղկացած կառավարութիւն մը, որովհետեւ կառավարութեան աշխատանքը ապահովելու համար պէտք է քաղաքական հովանաւորութիւն ստանալ:

Հանրապետութեան նախագահութեան մօտիկ աղբիւրներ հաստատեցին, որ նախագահ Աուն համոզուած է, թէ քաղաքական ղեկավարութիւնները կրնան ներքին լուծումներու յանգիլ՝ առանց արտաքին աշխարհին թելադրանքները սպասելու:

Նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, որ նախագահ Աուն արձարած է 18 թղթածրարներ, որոնք միտնուի, զեղծարարութեան եւ դրամի լուծումի իմաստով կասկածելի հարցեր են:

- 1) Պէյրութի միջազգային օդակայանի ազատ շուկայի ներդրումի թղթածրարը, 2) «Զազիսո տիւ Լիպան»-ի թղթածրարը, 3) Երեսփոխան

ժամիլ Սէյիտի կողմէ կաշառակերութեան մասին Չինուորական ատենակի մօտ կառավարութեան ներկայացուցիչ դատախազին փոխանցուած թղթածրարը, 4) «Ռաֆիք Յարիրի»-ի անունան հիւանդանոցին մէջ քաղաքացիական ղեղորայքը գործածութեան ժամկէտը աւարտած դեղերով փոխարինելու թղթածրարը, 5) Զ. Պ. Է.-ի կողմէ Լեռնալիբանանի մէջ 38 կայուած գնելու թղթածրարը, որ դրամի լուծումի եւ ահաբեկչութեան ֆինանսատրուի կասկածներ պատճառած է, 6) «Թ. Խ.» ընկերութեան կողմէ ստորագրուած կասկածելի համաձայնութեան մը թղթածրարը, 7) Պէյրութի միջազգային օդակայանին մէջ կասկածելի համաձայնագիրներու թղթածրարը, 8) Քաղաքացիական պարտականութիւններու եւ իրաւունքներու ու աշխատանքի ազատութեան կաշկանդումներուն, ինչպէս նաեւ իշխանութեան կողմէ օրէնքներու գործարարութեան խախտումին եւ հանրային կայունութեան շահագործումին թղթածրարները, 9) Ռամլէթ Պայտայի մէջ կոյաջուրերու ողողումին թղթածրարը, 10) Ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկին գումարները միտնուած թղթածրարը, 11) Առողջապահութեան նախարարութեան արտակարգ սակերով դեղորայք պարտադրելու թղթածրարները, 12) Պէյրութի Նահահանգիստին մէջ ներդրումները տնօրինող ժամանակաւոր խորհուրդին կողմէ անկարգութեան պատկանող գումարներուն միտնուած թղթածրարը, 13) Հաղորդակցութեան միջոցներու մարզին մէջ արձանագրուած օրինականութիւններու թղթածրարը, 14) Արդարութեան նախարարութեան կողմէ կառավարութեան փոխանցուած «Օժեր»-ի պայմանագիրներուն թղթածրարը, 15) Դատախազները վերադատ ատենակի մօտ հաշտութեան փոխանցելու թղթածրարը, 16) Սպայից վարժարանին մէջ միջնորդութեամբ ուսանողներ արձանագրելու թղթածրարը, 17) եւ 18) Ինքնաշարժներու քննութեան ու մեքանիքի թղթածրարները:

**ԴԱՏԱՎԱՆ ԻՆՎԵՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՃՈՒՑ ԵՆ ԱՇԽԱՏԱՆԻ**

Նախկին նախարար Մուհամետ Սաֆատիի տեղեկատուական գրասենեակը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, որ «Չէթունա պէյ»-ի թղթածրարին առումով Սաֆատիի դէմ ինչպէս ամբաստանութիւններուն պատճառով, Սաֆատի երէկ այցելած է ելեմտական հարցերու ընդհանուր դատախազ Ալի Իպրահիմի, որուն ներկայացուցած է «Չէթունա պէյ»-ի թղթածրարին մանրամասնութիւնները:

Դատախազ Ալի Իպրահիմ հարցաքննութեան հրաւիրեց կապալառու Յիշամ Իթանին՝ հաղորդակցութեան միջոցներու ֆայալը օսիթիքի թղթածրարին գծով:

Միւս կողմէ, լրագրող Սալէմ Չահրան երէկ այցելեց ընդհանուր դատախազ Դասսան Օուէյտաթի, որուն տրամադրութեան տակ դրամ կոյաջուրերու թղթածրարը, որուն ծախքը հասած է շուրջ մէկ միլիար տոլարի:

Չահրան առաջարկեց, որ ուժանիւթի եւ ջուրի հարցերու, ինչպէս նաեւ կենսուրդի նախարարները, զոյգ նախարարութիւններուն ընդհանուր տնօրէնները, նահանգապետները, ինչպէս նաեւ Բարգաւաճման եւ վերաշինութեան խորհուրդի պատասխանատուներն ու կապալառուները հաշտութեան կանչուին:

Չահրան դատախազ Օուէյտաթին ներկայացուց կոյուղիներու մարզին տնօրինման վերաբերեալ իր ունեցած բոլոր քարտէսները, տեղեկութիւնները եւ միտնուած գումարներուն մասին փաստերը:

**ՑՈՑՑԵՐԸ ԴԱՐԻՇԵԱՆ, ԲԱՑԻ ԹՐԻՓՈՒԼԻՆ**

Երէկ ամբողջ օրուան ընթացքին Լիբանանի մէջ ժողովրդային շարժումին կազմակերպած ցոյցերը դարձան Էլն, բացի Թրիփոլիէն, ուր մեծ թիւով ցուցարարներ համախմբուեցան եւ պատրաստակամութիւն յայտնեցին կասկածելու այսօր Պէյրութի մէջ տեղի ունենալիք խորհրդարանին նստեց արգիւնելու ցոյցին:

Նշեց, որ առաւօտեան Պալատէքի, Շորա-Տահր Պայտարի, ժողովարի, Թրիփոլի, Շեքքայի, Ըհլիկի եւ Պէյրութի բոլոր ճամբաները բաց էին:

Ցուցարարները վերաբացած էին նաեւ Ռիսիկ կամուրջը, ինչպէս նաեւ Զասքասի եւ Թայունէի ճամբաները, որոնք փակ էին:

Փակ մնացին Չահլիէ, Արեմոնեան Պեքայի, Թաթիթայի, Զապ Էլիասի, Շուպ Ժնինիի, Մարժի, Դազզի, Ասատնայէի, Թալալայայի եւ Մասնայի, ինչպէս նաեւ Զալպա-Աքքարի, Ապտի, Պըտատուի եւ Թրիփոլիի Նոր հրապարակին ճամբաները:

**ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՎԵՐԱԲԱՆԱՆ ԻՐԵՑ ԴՈՆԵՐԸ**



Դրամատուներու պաշտօնէաներու սենտիքաներու համադաշնակցութեան նախագահ ժող. Յաճ Յայտնեց, որ դրամատուները այսօր պիտի վերաբանան իրենց դռները՝ նկատի ունենալով, որ Դրամատուներու միութիւնը ապահովական ծրագիր մը երաշխաւորած է դրամատուներուն եւ անոնք պաշտօնէաներուն աշխատանքին անվտանգութեան համար:

Դրամատուներուն մէջ պահ դրուած գումարներուն մասին ոչ մէկ մտավախութիւն գոյութիւն ունի:

Ան կէսօրէ ետք յայտարարեց, որ դրամատուները պիտի կասեցնեն իրենց գործադրելը՝ հաստատելով, որ բոլոր դրամատուներուն համար այսօր աշխատանքային սովորական օր է:

Դրամատուներու միութիւնը իր կարգին հաստատեց, որ Լիբանանի մէջ գործող բոլոր դրամատուները այսօրուընէ սկսեալ կը վերադառնան իրենց սովորական աշխատանքին:

Երեկոյեան ժամը 7:30-ին Դրամատուներու միութիւնը հրապարակեց այլ շրջաբերական մը, որուն մէջ յայտնեց, թէ հակառակ իրենց որոշումին, թէ այսօր դրամատուներուն դռները բաց պիտի ըլլան, երեկոյեան շրջանառութեան մէջ դրուեցան ցոյցերու եւ ճամբաներ փակելու կոչեր: «Այդ կոչերուն լոյսին տակ, Դրամատուներու միութիւնը ցոյցերու վայրերուն մէջ գտնուող դրամատուներէն իւրաքանչիւրին տնօրէնին հայեցողութեան կը ձգէ դրամատուը բանալու կամ փակ պահելու որոշումը», նշուեցաւ շրջաբերականին մէջ:

**ՀԱՐՈՒՆ. «ՀԻՄՆԱԴԱՆՈՑՆԵՐՈՒՆ ՏՐԱՄԱՐՈՒՄԸ ՑԱՏԿՑՈՒՄԸ ԱՆԲԱՐԱՐՈՒ Է»**

Անձնական հիւանդանոցներու սենտիքայի նախագահ Ալէյման Հարուն երէկ շնորհակարտեց Պէյրութի Իրաւաբաններու սենտիքայի նախագահ Մըլիմէ Խալաֆին՝ անոր ընտրութեան առումով:

Միւս կողմէ, Հարուն յայտնեց, որ ելեմտութի նախարարութեան կողմէ Լիբանանի բոլոր հիւանդանոցներուն կատարուած 73 միլիար լ. ոսկիի յատկացումը անբաւարար է եւ հիւանդանոցներուն դիմագրուած տուգանապ չի լուծեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՄԲ ԼՕՒ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԱՆ

ՅԱՄԱԿ ԳԱՆԻԷԼ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑ «ԻՆՉՊԷՍ ԳԻՄԱԳՐԱԻԵԼ ՃՆՇՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ» ՆԻԻԹԸ

Շաբաթ, 16 նոյեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, կազմակերպութեամբ ԼՕՒ-ի Շրջանային վարչութեան, շահեկան դասախօսութիւն մը տեղի ունեցաւ ԼՕՒ-ի «Արաքսի Պուլ-ըլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: Օրուան դասախօսն էր վարուելակերպի հարցերու մասնագետ Յասմիկ Դանիէլ:



անհատին վրայ: Սակայն երբ կը ժպտիսք, ասիկա չի նշանակեր, որ հարցեր ու դժուարութիւններ չունիսք եւ առողջ ենք: Յասմիկ Դանիէլ ըսաւ, որ երբ մենք մտայն մէջ ենք, երկար տարիներ նոյն տեղը կը մնանք: Եթէ մենք մեր մտածելակերպը եւ կեանքի ապրելակերպը չփոխենք, մենք մե-

Բացման խօսքով հանդէս եկաւ ԼՕՒ-ի Շրջանային վարչութեան անդամ Նազելի Աւագեան: Ան յայտնեց, որ մեր օրերուն, յատկապէս վերջին ժամանակաշրջանին մեր ընկերութիւնը կը դիմագրաւ գանազան դժուարութիւններ, որոնք մէջ առաջին կարգին կու գայ ճնշումները: Ընդունաձեւութիւն ընտանեկան հարցեր դիմագրաւելու հետեանքով, աշխատանքին մէջ, ընկերութեան մէջ, դպրոցին մէջ թէ այլուր: Ան նշեց, որ այս մտահոգութիւններէն մեկնած, Շրջանային վարչութիւնը ուզեց իր յարկին մէջ հրաւիրել Յասմիկ Դանիէլը, որպէսզի իր ցուցմունքներով ուղղութիւն տայ ներկաներուն՝ դիմագրաւել կարեւարու համար ճնշումներէն երեւոյթը: Ա. Աւագեան մատնանշեց պատահին վրայ գրուած ծանօթ նշանաբանը, որ «կրնաս հասնիլ ամէն ինչի, որուն դու կը հաւատաս», եւ հաստատեց, որ դասախօսը կը հաւատայ, որ իւրաքանչիւր մեր ունեցած հարցերն ու դժուարութիւնները կրնանք դիմագրաւել անոնց մասին գրուելով, մենք մեզ կերտելով, գարգացումով, միշտ կարողաւով:



Նազելի Աւագեան



Յասմիկ Դանիէլ

Այս հրաւիրեց դասախօսը ներկայացնելու «Ինչպէ՞ս դիմագրաւել ճնշումները» սիրով: Յասմիկ Դանիէլ յայտնեց, որ կինը ուժը եւ կարողութիւնը ունի կառավարելու ամբողջ շրջապատը: Դասախօսը նշեց, որ երկու տեսակ վարուելակերպի կառավարում կայ՝ ջղայնութիւն եւ ճնշումներ: Չղայնութեան պարագային մեր ներքին հոգեվիճակէն դուրս ելող վարուելակերպն է, իսկ ճնշումներին մէջ այն է, երբ արտաքին ազդակներ կ'ազդեն մեր վարուելակերպին վրայ: Ան նշեց, որ մեր ուղեղը կրնայ կառավարել ամէն վարուելակերպ: Այսպէս մը բնորոշելու համար ըսաւ, որ դեպքը կը պատահի (որուն հետ անմիջական առնչութիւն չունիսք), որուն կը յաջորդէ մտածելու ձեւը դեպքին հանդէպ, ապա հոգեկան վիճակ կը ստեղծուի, եւ վերջապէս կ'ունենանք սխալ վարուելակերպ: Դասախօսը յայտնեց, որ որեւէ հարցի պարագային մտածելու ձեւը պետք է փոխել:

Յասմիկ Դանիէլ թուեց այն միջոցները, որոնցմով կարելի կ'ըլլայ ճնշումներէն հեռու մնալ: Առաջին՝ որեւէ դեպքի պարագային նախ պետք է մտածել եւ ուղեղը մարգելել, որպէսզի տարբեր իմաստ տանք դեպքին: Երկրորդ՝ մարգելեց ընել առօրեայ դրութեամբ: Բժշկական առումով փաստուած է, որ մարգալեց մեր ճնշումներինը դուրս կը հանէ մարմնէն: Երրորդ՝ առողջ սննդականոնի հետեւիլ: Ան նշեց, որ վնասակար ուտելիքը թոյլ կը մտնէ մեր մարմնին մէջ: Չորրորդ՝ ընթերցանութիւն: գիտականօրէն փաստուած է, որ ընթերցանութիւնը 68 առ հարիւր դրական ազդեցութիւն ունի մեր վրայ, որ մեր արեան շրջանառութիւնը լաւանայ, եւ մեզ կը հանդարտեցնէ երաժշտութենէն աւելի: Ան յայտնեց, որ ինք բացած է կիներու յատուկ պուք ջլապ, ուր ամէն մարդ գիրք մը կ'առնէ, կը կարդայ, եւ ամիսը անգամ մը անոնք կը հաւաքուին գրուցելու եւ կարծիք տալու իրենց կարդացած գիրքին մասին: Ան հանձնել է օգտաշատ նկատեց այս նախաձեռնութիւնը: Հինգերորդ՝ հանրային աջակցութիւնը (social support): Սովորութիւն պետք է դարձնել գիրք ողջագուրել փաթեթելով իրարու, որ ժպտի մը եւ հանդարտութիւն կը փոխանցէ անհատին: Վեցերորդ՝ յետաձգել: Պետք է փորձենք օրինակ դառնալ իրարու եւ մեր օրինակով մեր շրջապատը մղել աշխատանքի: Մարդկային ուղեղը շատ ծոյլ է: Մենք պետք է փորձենք միշտ ուղեղը աշխատեցնել, մարգել եւ յետաձգել մեր աշխատանքներն ու նախաձեռնութիւնները: Եօթներորդ՝ պետք է արթնցնել անհատապէս եւ հաւաքաբար: Պետք է միշտ արթնել, որովհետեւ ատիկա հոգեկան հանգստութիւն կը շնորհէ անհատին, ճնշումները դուրս կ'ելլէ մեր մարմնէն, եւ շատ լաւ որոշումներ կու տանք: Ութերորդ՝ ներհայեցողութիւնը (meditation): Մենք շատ անցեալին մէջ կ'ապրինք կամ վարուան մասին կը մտածենք, կը մտահոգուինք: Մենք կը մոռնանք ներկան ապրիլ: Ներհայեցողութիւնը մեզի կ'օգնէ, որ ներկան ապրինք: Անով քանի մը վարկեանի մէջ կը հեռանանք մեր անցեալէն եւ ներհայեցող անհատը ուղղութիւններ կու տայ, որ հանգիստ վիճակի մէջ գտնուինք: Տասներորդ՝ շունչ առնել: Շատ կարեւոր է ճիշդ շնչառութիւնը: Ուղեղը երբ ճնշուած կ'ըլլայ, շնչառութիւնը կ'օգնէ, որ հանդարտուինք: Տասնմէկ՝ մենք մեր մտածելակերպով ճիշդ ենք, միջոցներ մեր դիմաց անհատը ուրիշ կարծիք, տեսակետ, գաղափար եւ դիտելու կարողութիւն ունի: Ուրեմն պետք է յարգել նաեւ ուրիշին գաղափարն ու կարծիքը: Տասներկու՝ կերտնացում: Ուր որ կերտնացում, մեր ուժն ու կարողութիւնը այդ նիւթին վրայ կ'ըլլայ: Կերտնացումը շատ կարեւոր է մեր կեանքին մէջ:

Դասախօսը նշեց, որ ամէն առտու մենք մեր ժպտով կրնանք դրական տրամադրութիւն եւ ազդեցութիւն ձգել

զի ջնջալարենք, նոյն տեղը կը մնանք: Մուրը մեր ետին պետք է ձգենք, եւ այդ պզտիկ լոյսը, որ կը տեսնենք, անոր պիտի հետեւանք: Մենք պետք է վստահինք մեր ուժերուն, ջնջենք մէկու մը վրայ: Միշտ դրական մտեցումով պետք է ապրինք մեր կեանքը: Նշեց, որ դասախօսութիւնը շատ հետաքրքրական էր, որովհետեւ ներկայացուցեց լսողատեսողական միջոցով: Ներկաները նաեւ դիտեցին կարծ տեսերիզներ նիւթին վերաբերեալ՝ առաւել հաղորդական դարձնելով նիւթը: Աւարտին ներկաները հարցումներ ուղղեցին Յասմիկ Դանիէլին, որ սպառիչ լուսաբանական պատասխաններ տուաւ այս նիւթին շուրջ: Այս ԼՕՒ-ի Շրջանային վարչութեան ատենապետ Սիլվա Մապուլեան յուշանուիր տուաւ Յասմիկ Դանիէլին: Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱԳՆԵՐ...

Ճարուակուած Ա. Էջէն

«Մեր մտահոգութիւնները կապուած են ոչ թէ Իրանի հետ օրինական առեւտուրին, այլ այն հարցերուն, որոնք կը վերաբերին Իրանի կողմէ ահաբեկչական միաւորումներուն պետական մակարդակով աջակցութիւն ցուցաբերելուն: Ասոնք շատ յստակ եւ թիրախաւորաբար ուղղութիւններ են», ըսաւ ան՝ նկատել տալով, որ այդ ուղղութիւններէն դուրս այլ յարաբերութիւններու, օրինական առեւտուրի վերաբերեալ առարկութիւն չունին Միացեալ Նահանգները:

«Միվիլնթեթ»-ի հետ ունեցած գրոյցի մը ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Իրանական կողմին հետ համագործակցող հայաստանեան երկու ընկերութիւններուն, որոնք նկատմամբ Միացեալ Նահանգներ այս տարի պատժամիջոցներ սահմանած է: Խօսքը «Մարկեյ» ընկերութեան եւ Երեւանի կապի միջոցներու գիտահետազոտական ինստիտուտի (ԵրԿԿԳԻ) մասին է:

ԹԵՐԻԱՆ ՈՒԱՇԻՆԿԱԹԵՆԸ Կ'ԱՍԲԱՍՍԱՆԵ...

Ճարուակուած Ա. Էջէն

Ան ըսաւ, թէ՛ «կառավարութիւնը երկու ընտրանքի առջեւ էր. կամ տուրքեր հաստատել, կամ՝ ալ լաւ եկամուտ ունեցող հատուածներուն կառավարական աջակցութիւնը դադարեցնել», եւ ընտրեց երկրորդը:

Կառավարութեան բաները Ալի Ռապի յայտնեց. «Ցաւօք, անկարգութիւններ տեղի ունեցած են նաեւ վերջին քանի մը օրերուն: Իրաւապահ մարմիններու քանի մը աշխատակիցներ յարձակումի ենթարկուած են եւ գոհուած», ըսաւ ան:

Իրանի ճարտարարուեստի եւ առեւտուրի նախարար Ռիտա Ռահմանի յայտարարեց, որ պենզինի գինին բարձրացումը երբեք բոլոր ապրանքներուն գինը բարձրացնել չի նշանակեր՝ աւելցնելով, որ հսկողութիւնը խստութեամբ պիտի վարուի գիներու որեւէ խախտումի հետ: Իրանի արտաքին գործոց նախարարութեան բաները Ապաս Մուսաւի Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմպեյի՝ Իրանի վերաբերեալ յայտարարութիւնները որակեց «կեղծաւորութիւն»:

Կառավարութեան բաները Ալի Ռապի յայտնեց. «Ցաւօք, անկարգութիւններ տեղի ունեցած են նաեւ վերջին քանի մը օրերուն: Իրաւապահ մարմիններու քանի մը աշխատակիցներ յարձակումի ենթարկուած են եւ գոհուած», ըսաւ ան: Գերմանիոյ կառավարութեան բաները Ուլիքիշ Տեմեր Պերլինի մէջ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց. «Մենք մտահոգութեամբ կը հետեւինք իրադարձութիւններու զարգացման, յատկապէս գոհեցու, ձեռնարկութիւններու վերաբերեալ հաղորդագրութիւններուն: Մենք Իրանի կառավարութեան կողմէ կ'ուղղենք՝ յարգելու հաւանքներու եւ կարծիքներ յայտնելու ազատութիւնը: Իրանի մէջ մարդիկ պետք է կարելիութիւն ունենան իրենց դժգոհութիւնը յայտնելու քաղաքական եւ տնտեսական գարգացման վերաբերեալ, ինչպէս նաեւ իրենց կարծիքը յայտնելու ազատ եւ խաղաղ ձեւով»:

Իրանեան «Թասնիմ» լրատու գործա-

նութիւնը կը գրեւորէ:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ...

Ճարուակուած Ա. Էջէն



Նախկին համալսարաններուն մէջ ուսանող ապագայ երկրաչափին բնա պետք չէ ուսուցանել հայերէն, հայերէնի դասաւանդումը անհարկիօրէն կը ծանրաբեռնէ ուսանողները, եւ թէ դպրոցին մէջ ստացած գիտելիքը բաւարար է: ԵՊՀ Հայոց պատմութեան ամպիոնի վարիչ Արտակ Մովսիսեան նշեց, որ իրենք երկու կողմերը պատուար կանգնած մարդիկ չեն:

Ան նշեց, որ զիրենց կը մտահոգէ այն, որ ամբողջ 42 էջնոց նախագիծին մէջ ընդամենը 11 տող յատկացած է Գիտութիւններու ազգային ակադեմիային (ԳԱԿ), ամենէն կենսական նշանակութիւն ունեցող ոլորտներէն կրթութիւնն ու գիտութիւնը մեկտեղուած են տեղ մը, ուր երբեք մեկտեղելի չեն:

Հայաստանի ԳԱԿ-ի պատմութեան հիմնարկի տնօրէն Աշոտ Մելքոնեան ըսաւ, որ դպրոցը ասարտած շրջանաւարտը, որ այսօր գիտուր է, «քապիկ է գիտելիքը»: «Բաներ կան, որ պետք է պարտադրել: Գաւառուած են, որ եթէ օրէնքի նախագիծի այդ կէտը մնաց, պարտադրանքը կ'ընդհատուի, որեւէ դիտողութիւն չէ եղած»:

Advertisement for 'ՍՈՆԱՎԱՃԱՌ' (Sona Vajram) featuring a scale of justice and text about a competition for the best student of the year. It includes dates like 'ՈՒՐԲԱԹ, 29, ԵԱՐԱԹ, 30' and 'ՆՈՅԵՄԲԵՐ ԵՒ ԿԻՐԱԿԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019-ԻՆ'.

ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏԻ ԲՆԱԿԱՐԱՐՆԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԷՉԸ www.bourjhammoud.gov.lb

# ԿՈՄԻՏՅԱՍԻ 150 ԱՄԵԱԿ



## ԿՈՄԻՏՅԱՍԻ ԱՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Կոմիտասի Էջմիածնի լճափին, անթուակիր

Քանի որ այս տարի նշում ենք Կոմիտասի ծննդյան 150-ամեակը, շատ տեղին է ներկայացնելու հետեւեալ տեղեկությունը մեր Մեծ Հանճարի մասին:

Կոմիտասի արձաններ կանգնեցրել են թե՛ Հայաստանում, թե՛ մեր երկրի սահմաններից դուրս: Երեւանեան արձաններից զատ՝ առաւել յայտնիներից են Փարիզում (քանդակում Դաւիթ Երեւանցի) եւ Վահարշապատում (քանդակագործ Երուանդ Քոչար) գտնուող արձանները: Երեւանում Կոմիտասի երկու արձան կայ: Մէկը մահարձան է՝ Կոմիտասի անուն գրասպասարանի պաշտոնում, երկրորդը՝ Երաժշտանոցի դիմաց գտնուող պուրակում: Մահարձանը Կոմիտասի շիրմին է դրուել նրա մահուանից աւելի քան երկու տասնամեակ անց՝ 1955-ին:

1936-ին Կոմիտասի յուղարկաւորութեան փաստն իրարանցում էր առաջացրել այդ տարիների իշխանական շրջանակներում, խորհրդային իշխանութիւններն անգամ հրահանգում են հանել Կոմիտասի արձանը: Հրահանգն, ի հարկէ չի կատարուում, եւ Կոմիտասի շիրմը տապալաւորուում է մինչեւ 1955 թ.:

Մահարձանի քանդակագործը Արա Յարութեանն է: Դա քանդակագործի դիպլոմային աշխատանքն է եղել, իսկ արձանի պատկերներն ու յայտնուելը հետաքրքիր պատմութիւն ունի:

Քանդակագործի որդին Արամ Յարութեանն է, որ երբ հայրը որոշել է որպէս դիպլոմային աշխատանք Կոմիտաս քանդակել, մտքովն անգամ չէր անցնում, որ այն յետոյ պատկերուում է յայտնուելու: Այն տարիներին նրա այդ որոշմանը հասանում է տուել արուեստանոցի ղեկավար, քանդակագործ Սուրեն Ստեփանեանը, աջակցել է նաեւ քանդակագործ Արա Սարգսեանը: Սակայն եղել են նաեւ մարդիկ, որոնք փորձել են նրան տարհանալ, զգուշացրել են, որ տհաճ անակնկալներ կարող են լինել: Բայց ապագան քանդակագործին տհաճ անակնկալի փոխարէն՝ հաճելի անակնկալ է մատուցում: **Դիպլոմային** գերազանց պաշտպանելուց յետոյ քանդակագործը քաղաքային խորհրդի ներկայացուցչի կողմից առաջարկ է ստանում աշխատանքը պրոնզի վերածելուց յետոյ տեղադրել Կոմիտասի գերեզմանին: Մահարձանը Արա Յարութեանի Կոմիտասի առաջին, բայց ոչ վերջին կոթողային քանդակն է:

Մահարձանի տեղադրումից 33 տարի անց մայրաքաղաքի կենտրոնում՝ Երաժշտանոցի դիմացի պուրակում յայտնուում է Արա Յարութեանի երկրորդ Կոմիտասը: Հենց այդ պուրակում Կոմիտասի արձանը տեղադրելը եղել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճեանի առաջարկը: Նա ուզում էր, որ քաղաքի կենտրոնում մեկտեղուելին Մարտիրոս Սարգսեանի, Արամ հաջատրեանի եւ Կոմիտասի արձանները... Եթէ պատկերում դրուած մահարձանը տեղադրուել է առանց մրցոյթի, ապա պուրակի արձանի համար յայտարարուած մրցոյթին մեկ տասնամեակից աւելի աշխատանք էր ներկայացուել:

Դեմիրճեանը երկար կանգնելով Ա. Յարութեանի

րուպիւնեանի աշխատանքի առջեւ՝ քանդակագործին նախնորդի է համարել «ամուր ստաձ» Կոմիտասին յաւերժացնելը: Այստեղ արդէն ի յայտ է գալիս ինդիվիդուալ ծառայի որպէս նատարան: Օգնութեան է գալիս Կոմիտասեան երաժշտութիւնը: Երբ ծայրասփիւռը հաղորդեց Կոմիտասի «Ճիրանի ծառ» երգը, մէկ էլ հայրս ասաց՝ գտայ, գտայ, Կոմիտասը ծիրանի ծառի վրայ կը նստի»: Գնաց Հոկտեմբերեանի շրջանից մի տապալումս ծիրանի ծառ գտաւ, բերելու ու ձուլեց պրոնզից: Այնպէս որ, Կոմիտասը նստած է տապալումս ծիրանի ծառի վրայ, վերջինում է Արամ Յարութեանը:

Արձանի բացումը տեղի ունեցաւ 1988թ. յունուարին: «Ակնկալում էինք ճոխ, մեծ բացում, սակայն չգիտէինք, որ արդէն շարժման սկիզբն էր, խմորումներ կային, որոնցից մենք տեղեակ չէինք, իսկ քաղաքական ղեկավարութիւնը գիտէր», ասաց մեր գրուակիցը: Այնուհանդերձ, այս հանգամանքը չի խանգարել, որ քանդակագործը մեծ ուրախութիւն ապրի նոյն պուրակում նրա երկու աշխատանքներն են՝ Սայաթ-Նուպայի աղբիւր-յուշարձանը եւ Կոմիտասի արձանը:

Պուրակը երեւանցիների ամենասիրելի վայրերից է: Այստեղ յաճախ բացօթեայ համերգներ են կազմակերպում:

Արամ Յարութեանը պատմեց, որ ժամանակին այստեղ յաճախ էր լինում նաեւ իր հայրը. «Գալիս, պատում էր, **թեքնիք** խնդիրներով էր հետաքրքրուում, ջուրը տուեցին, չտուեցին, աղբիւր-յուշարձանի վրայ ջուրը կը հոսի, կը գնայ քարերի արանքը, քարերը իրարից կը հեռանան: Ես էլ եմ յաճախ թռչնակիս հետ լինում այդ պուրակում», ասում է Ա. Յարութեանը: Կոմիտասի անունն է կրում նաեւ մայրաքաղաքի բաժնի պողոտաներից մէկը: Այն քաղաքի Չէրյուն թաղամասը կապում է Բարեկամութեան հրապարակի հետ:

Կոմիտասի պողոտան նախապէս կոչւել է Արաբկիրի 24 փողոց, սակայն ներկայիս երկարութիւնը չի ունեցել: 1951 թ. դրան է միացուել Արաբկիրի 62-րդ փողոցը՝ իր նրբանցքներով, իսկ 1977 թ. մարտի 9-ի որոշմամբ այն դարձել է Կոմիտասի պողոտայ:

Հաւաքեց ու ներկայացրեց, ԱՐՄԻՆԷ Կ. ԿՈՒՆՎԱԾԵԱՆ

## ԿՈՄԻՏՅԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

(ՍՈՂՈՍՏՈՆ ՍՈՂՈՍՏՈՆԵԱՆ) 1869-1935

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԼՈՒՍԱԿՈՒՐԻՉԸ

Անուններ կան, որոնք ազգ մը կը ներկայացնեն: Անուններ ալ կան, որոնք ճակատագրական են եւ մեզ կը թարգմանեն:

Կան նաեւ անուններ, որոնք թե՛ մեր հոգիին եւ թե՛ մեր լեզուին կը պատկանին:

Այս անունները մեզմէ աւելի կանուխ ծանօթ են ամեն բանի, անոր համար եկան եւ կերտեցին մեր երկիւնը, խորութեամբ եւ նոյնքան ալ պայծառութեամբ միաժամանակ դաշնաւորեցին մեր ձայնն ու ըսելիքները եւ դարձան ոչ միայն անձ, այլեւ՝ հայութեան նոր օր, նոր կեանք եւ ազգի վերածնունդի սատարող նոր կամք:


Ահա այդ անուններն են՝ ԿՈՄԻՏՅԱՍ Վարդապետ:

Անուն մը՝ պարզ եւ խորունկ: Մեր ժողովուրդի երկնքն փրթած անուն մը: Գիտակից: Մեծ հայ մը՝ ամեն բանէ առաջ եւ մեծ տաղանք: Մինակը իր ժողովուրդը կերակրեց երգով ու աղօթքով:

Շատ մօտ է մեզի այս շքեղ անունը: Հարազատ: Արդար: Շատ լսած է խօսած ենք անոր հզօր կերպարանքին մասին: Ան իբրեւ ջերմ հաւատացող մը իր ազգին արժեքներուն՝ մեզի հայ երգը սորվեցուց: Քիւթախիցայի այս որբ տղան յանուն ազգին երգեց, սորվեցուց ճանձնալ հայը գիւղացին, սերը, բնութիւնը: Այլ խօսքով, ան դարձաւ մեր երկնքն ձայնը: Եղաւ անոնցմէ, որոնք շուտ կը կերտեն իրենց դէմքը:

Եղաւ մեծ հայրենասեր: Ինք կանուխէն չգիտած էր աշխարհն ու մեծութիւնը, որովհետեւ հայ մտքի եւ հոգիի լոյսը դարձուցած էր մեր աղօթագիրքը:

Իր տեսած հայ գիւղացին եւ հայ գեղջուկը ուրիշ էին: Մենք չէինք տեսած, ոչ ալ կրնայինք տեսնել: Ինք է՛լ կը տեսներ է՛լ կը խօսեր է՛լ կ'երգեր: Իր շունչը բերաւ՝ խառնելու մեր կեանքին եւ նոր հորիզոններ բանալու մեր աչքերուն առջեւ:



Գեորգ Բաշինջաղեան, Կոմիտասի դիմանկարը, անթուակիր

բարի վարդապետ: Բացառիկ մարդ, սաստիկ մտածումներու տեր՝ ներքին ու շտեմարած, գտաւ, իր մտքին մէջ հիւսեց: Իր գործիքները եղան՝ հայուն ցաւը, սերը, վիշտը, ուրախութիւնը: Միտք, սիրտ, հոգի եւ ոգիի հրդեհումներով:

Կոմիտաս՝ վանքերու երկրին մէջ մեծ վանական: Եղաւ ու չկան իրեն չափ եւ հաւասար մարդիկ: Հայաստանը երբեք չունեցաւ իր նմանը, իրեն չափ խորունկ բարձունք, հոգեկան արտազայտութիւն եւ սքանչազոյց:

Իր ժողովուրդը իր տաղանդին մէջ կ'ապրի երգին ջերմութիւնը, որուն հաւասարը չկայ ուրիշ ազգի մէջ, պարապ տեղ մի՛ փնտռեք:

Մեր երաժշտութեան, երգին եւ ձայնին Մետրոպ Մաշտոցը, եւ ինչո՛ւ չէ, նաեւ՝ Հայ ժողովրդական երաժշտութեան Մեծ Լուսաւորիչը: Իրեն կը պարտիք վերջապէս այս կեցումը, որ հայկական է, հայուն է եւ ազգային է: Իր ազգը իրեն տուած է հարուստ նիւթ, եւ որ միայն հայութեան կը պատկանի: Անոր համար հայու ոգին բազմապատկուեցաւ: Բառ դարձաւ: Դարձաւ ձայն եւ երգ ու հայութեան անջնջելի ճակատագրին մէջ խոր ընդարձակ եւ կիզիչ հեռուները իրար կապող խորունկները միացնող կամուրջ: Չիկնէր երգեցիկներն ու տակաւին կը շարունակէր...

Հանճարեղ եւ մեզ բոլորս զիրար միացնող վարդապետ: Հայ երգի քրմապետ, որ խոր կնիք դրաւ եւ յարատեւորեց մեր տոհմական դաշտերը:

Մեր մեծութիւնն ու հպարտանքն է այս վարդապետը: Ազգային հպարտութիւն: Հերոս: Ազգային ինքնուրոյն դիմագիծի կերտիչ: Ու հաստատապէս՝ քաներորդ դարու Մաշտոց եւ նոյնքան ալ՝ Հայ ժողովրդական երաժշտութեան Մեծ Լուսաւորիչը, որ երգեց հայ ժողովուրդի վիշտն ու ուրախութիւնը՝ հայրենասէր անջնջուն հոգիով ու նոյն այդ հոգիով ներշնչուեցաւ ու ներշնչեց:

Ստեղծեց հայ երաժշտութեան կրօնը ու դարձաւ յօրինող, խմբավար, երգիչ:

Եւ որովհետեւ հանճարի լոյսը կը կրէր իր անձին մէջ, ան պետեց հայ շինականի հոգին եւ հասաւ մեր մշակոյթի արմատներուն: Դուրս հանեց, գտեց եւ մաքրեց մեր ինքնութիւնը բնորոշող դարերու ծանկն:

ԿՈՄԻՏՅԱՍ Վարդապետ՝ Աստուածատուր Հրաշք մը: Որքէն ծնունդ առնող մեծ հանճար: Սլացիկ եւ ուրոյն դպրոց: Իր բնածին տաղանդով, շնորհով, աստուածատուր ծիրով եւ յատկութեամբ ու կարողութեամբ մեր երաժշտութեան պատմութեան մէջ ինքնայատուկ ոգի եւ նկարագիր դնելով՝ ստեղծեց եւ վերստեղծեց ազգային մեր ինքնութիւնը:

Հանճարեղ վարդապետ մը, որ իր ջրօրհնով ակօսեց մեր երաժշտութեան անդամակերպ մէջ ու կարողացաւ իր ժողովուրդի հոգիներուն մէջ արձագանգել ու մինակը մտաւ հայ երաժշտութեան մեծ դռներ:

Եւ սակայն նաեւ՝ տարաբախտ վարդապետ մը, որ իր ստեղծագործ միտքով նաեւ դարձաւ հայ երաժշտութեան անկիւնադարձը՝ իր անձը դարձնելով մեր կեանքի յենարանը:

Ո՛վ որ կ'ուզէ իր ժողովուրդի բարի, սիրոյ, պարզ, խաղաղ, միամիտ դէմքը տեսնել, առանց Կոմիտասի՝ չի կրնար: Որովհետեւ Կոմիտաս մեր ձայնն է: Հայու ձայնը եւ հայ ըլլալու եւ մալու բարձր գիտակցութիւնը:

Այսօր դարձեալ մեծ յարգանքով եւ երկրպագութեամբ կը կենանք իր դէմ չաւարտած վաստակին առջեւ:

Եակակնը. Ի՛նչ աւելցուցած ենք իր անունին, իր կտակին եւ իր պատգամին:

Բայց... անկախ այս բոլորէն՝ բիւր յարգանք իր յիշատակին:

ԳԵՈՐԳ ԴԵՏԻՎԵԱՆ

# «ՀՅԴ ԱՐՑԱԽԻ ԿԱՌՈՅՑԸ ՈՒՆԻ ՎՃՌԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՓԱԲԱԺԻՆԸ՝ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ»․ ԴԱԽԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ

5 և 6 նոյեմբերին Աթենք գտնուեցաւ Արցախի Ազգային ժողովի պատգամաւոր եւ ՀՀԿ Արցախի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեանը, որուն հետ «Ազատ Օր»-ը ունեցաւ շահեկան հարցազրոյց մը՝ Արցախի մասին։ Ստորեւ կը ներկայացնենք ամբողջական գրոյցը։



